— Մանաւորապէս հիմա որ ստուգեցինք Չատի ջրին ինչ տեսակ ըլլալը։ Արդեօք այդ ձկունք կ'ուտուի՞ն, պարոն Ֆէրկըսըն։

— Այդ քու ձուկդ, ճօյ, պարզաբար թանձրամորթից սեռէն կաթնտու մըն է. իր մսին համար կ'ըսեն թէ սքանչելի է, և մեծ առուտուրի նիւթ է լճին եզերքները բնակող այլ և այլ ժողովրդոց մէջ։

— Թէ այդպէս է կը ցաւիմ որ պարոն Տիքին հրացանին հարուածը լաւագոյն ելք չունեցաւ։

— Այդ կենդանին միայն որովայնին և զստից մէջ տեղուանք խոցելի է. Տիքին գնտակը և ոչ ցեռած ըլլալու է զինքը։ Բայց թէ որ գետինը ինծի նըպաստաւոր երևնայ, լճին հիւսիսային ծայրը կանգ կ'առնունք. հոն Քէննըտի առատ որսոյ փակատեղւոյ մը մէջ գըտնէ պիտի ինքզինքը, ու հեշտեաւ իր կարօտը կը լեցնէ։

— Շա՛տ աղէկ, կանչեց ճօյ. թող պարոն Տիք քիչ մը ձիագետիի որսորդութիւն ընէ. կ'ուզեմ այդ երկկենցաղին միսը ճաշակել. ստոյգ որ բնականէ դուրս է մինչև Ափրիկէի կեդրոնը թափանցել կոցար ու կաքաւ ուտելու համար, ինչպէս յԱնգղիա։

Կը շարունակուի։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆՔ

Աշխատութիւն. — Քու վիճակդ ձեռքդ է, և դուն ես որ այս օրս ընելով վաղուանը կը պատրաստես։ Նիւթական հանգստութիւնը, հարստութիւնը, քաղաքականութիւնը, գիտութիւնը, բարոյական յառաջադիմութիւնը, այս ամեն բան՝ կրնայ ձեռք ձգուիլ. բայց այս ամեն բանս պէտք է ստանալ. վասն զի այս ամենը վարձք մըն է, և ամենայն վարձք՝ ջանք կ'ուզէ։

Աշխարհքս մեզի յանձնուած է, ինչ որ ընենք՝ կ'ըլլայ, և ինչ որ ընենք մեր ինչ ըլլալէն կը կախուի վասն զի մենք ենք մեծ զօրութիւնը, մեզմէ կը սկսի ամենայն ինչ և 'ի մեզ կը վերջանայ։

Արդարութեան մէջ՝ աշխատութիւն, աշխատութեան մէջ ալ ազատութիւն։ Արդարութիւնը և ազատութիւնը զքեզ կը մերժեն, հարցուր իրենց. և աշխատութեան մնալով ունեցած կարողութիւնդ բանեցուր, և մի՛ կարծեր որ քու ջանքերդ կորսուած ըլլան գինը ստացած չըլլալուդ համար, և կամ գինը յուսացածէդ չափ բարձր չըլլալուն համար։ Ոչ ինչ կը կորսուի այս աշխարհքիս մէջ, և այսպէս ալ երբեմն պզտիկ հասակը շատ աւելի փորձ կու տայ[1]։

1 Փրէտէրիկոս Բաստի։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ